

## ԱՆԱՏՈՒԻ ԱՎԱԳՅԱՆ

### «Իմաստության ոսկե հանրագիտարան»

Հոկտեմբերի 29-ին Հայաստանի ազգային գրադարանի դահլիճում տեղի ունեցավ իրավագիտության թեկնածու, արդարադատության գեներալ-լեյտենանտ, մասնագիտական մի շարք մենագրությունների հեղինակ Անատոլի Ավագյանի **«Իմաստության ոսկե հանրագիտարան»** գրքի շնորհանդեսը:

Գրքում ներառված են տարբեր ժամանակների և ժողովուրդների մեծագույն ներկայացուցիչների՝ Հին Արևելքի և անտիկ աշխարհի մտածողներից մինչև ժամանակակից գիտության, արվեստի, քաղաքական ու ռազմական ականավոր գործիչների աֆորիզմներն ու ասույթները: